

մէջ (մազազա), որ այս շինութեան ամենավարինն է. ճրագ մը վառէ և դիր վառօղին մէջ. յետոյ քեզ ազատէ թագնուելով այնտեղէն հեռու: Հայ Մըխօն հեռեկելով Սուլթան-Խանըմի յանձնարարութեան, կէս գիշերին կը տանի վառօղի տակաւ որ կը դնէ գետնայարկը՝ Սէյտ Ահմէտ փաշայի ասարանքին տակ, և ինքը դուրս կը պրծնի պայտաի մէկ դռնէն. ու ահա Սէյտ Ահմէտ փաշա կը կորսուի (կը մեռնի)՝ իր ազաներէն ու ծառաներէն երեսուն մարդու հետ. անոնց մարմինները հաւաքուեցան առաւօտ՝ կէս ժամ հեռաւորութեան վրայ, վերուցին ու թաղեցին: Սէլիմ փաշան այս բաղդաւոր լուրը առնելուն պէս հասաւ, ու բռնի դարձաւ Ռուժէկաններու կառավարիչ: Նա մեծանօգութեամբ վարձատրեց այս Հայը իր այն գործին համար, ու դարձուց իր սիրելին: Այսպէս Շէյխ փաշան գտաւ իր պատիժը ու ժողովուրդը ազատուեց անոր բռնակալութենէն:

Նա թողեց երկու սրդի աւելի գէշ քան իրենց հայրը. մին կը կոչուէր Շէյխ - Մուհամմէտ բէգ, միւսը Շէյխ - Մուստաֆա բէգ. ասոնք բռնի դրաւեցին Խըլլաքը (Խիլաթ), պարզելով ապստամբական դրօշ՝ գործեցին սպանութիւններ և ուրիշ շատ եղեռնագործութիւններ:

Շէյխ - Մուհամմէտ բէգ առեւանդեց բաւական թւով Հայ և Միւսիւլման կիներ, անոնց բռնի վերջնելով իրեն կին կը դարձնէր: Կ'ըսեն թէ, ինքն իր խի ձեռքով, առանց ունէ մէկի օգնութեան՝ սպանեց քառասուն մարդ, որքան Հայ, այնքան և Միւսիւլման:

Աւելի ուշ, երբ Պէտէրխան բէգ ասպարէզ ընկաւ, դէպքերի ժամանակ՝ երբ Օսմանցիներ տիրեցին Քիւրդիստանի, այս Շէյխ Մուհամմէտ ծպտեալ փախաւ Պաղտատ, և իր եղբայր Շէյխ Մուստաֆան բռնուեցաւ Խան Մահմուտի հետ և աքսորուեցաւ Ռուսճուկ. այսպէս եղաւ որ Աստուծոյ ծառաներու օձիքը ազատուեց անոնց ձեռքէն, և բնակիչները գտան իրենց հանդարտութիւնը:

Կը տեսնուի որ քիւրդ ժողովուրդն ալ իր քիւրդ իշխողներուն հակառակ էր, և կը ցանկար Օսմ. տիրապետութեան.